ՄԽԻԹԱՐ ԳՈՇ, ԳԻՐՔ ԴԱՏԱՍՏԱՆԻ, աշխատասիրությամբ Խոսրով Թորոսյանի, *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1975, էջ 119+642*

Մատենադարանը հաճախ է մեզ ուրախացնում հայոց հինավուրց մշակութային ժառանգության գրավոր արժեքների քննական բնագրերի հրատարակությամբ։ Դրանց շարքում կարևոր տեղ է գրավում Մխիթար Գոշի Դատաստանագրքի երկու խմբագրությունների հրատարակությունը՝ Մատենադարանի աշխատակից, իրավաբան Խոսրով Թորոսյանի աշխատասիրությամբ։

Մխիթար Գոշը միջնադարյան հայ մտքի հսկաներից է և նրա անունը տեղ է գտնում Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու և Գրիգոր Նարեկացու անունների կողքին։

Մխիթար Գոշը եղել է միջնադարյան խոշորագույն օրենսգետներից մեկը, հասարակական-քաղաքական, եկեղեցական նշանավոր գործիչ, անվանի առակագիր, մեծահամբավ մանկավարժ և դաստիարակ։ Նրա մեծությունը ճանաչել են ժամանակակիցները և արժանին հատուցել անվանելով՝ «հռչակավոր», «իմաստուն», «աշխարհալույս», «հռոմեաց վարդապետ»։

Միջնադարյան հայ հասարակական-տնտեսական կյանքը, իրավական հարաբերությունները ոչ մի գործում չեն գտել իրենց այնքան բազմակողմանի և ճշմարտացի արտահայտությունները, որքան Մխիթար Գոշի Դատաստանագրքում։ Բայց Գոշը այդ հարաբերությունների սոսկ արձանագրողը չէր։ Լինելով գոյություն ունեցող ֆեոդալական հասարակության պաշտպանը և տիրող կարգերի պաշտպանը, նա միաժամանակ ձգտել է, որ այդ հասարակությունը խարսխված լինի օրինական հիմունքների վրա, իր վերաբերմունքն է ցուցաբերել հասարակական կյանքի և օրինականության շատ ու շատ կողմերի նկատմամբ, անհրաժեշտ է համարել իրենց դարն ապրած երևույթների բարեփոխությունը, ինքը փոփոխել է հնացած օրենքները՝ ժամանակի հարաբերություններին և պահանջներին համեմատ, պաշտպանել է մարդու իրավունքները։

Մխիթար Գոշը ընդառաջել է հայկական կործանված պետականության վերականգնման պատմականորեն առաջադրվող պահանջին։ Նրա Դատաստանագիրքը գրավոր մեծ հուշարձան է ոչ միայն հասարակության և հասարակական մտքի զարգացման պատմության համար ունեցած ճանաչողական անգնահատելի արժանիքներով, այլև իր պարունակած պատմական մեծ խորհրդով։

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը արտահայտելով դարաշրջանի ներկան, միաժամանակ ունեցել է կիրառական, գործնական նշանակություն։ Ուրեմն, հրապարակ է հանված, հիրավի, մեծարժեք մի գործի գիտական բնագիրը։

Սակայն Մխիթար Գոշի Դատաստանագիրքը նորություն չէ հայագիտության մեջ, շուտով կբոլորի նրա առաջին գիտական հրատարակության հարյուր տարին։ Նոր հրատարակության Առաջաբանում արժանին է հատուցվում Վահան Բաստամյանցին, որը 1880 թ. Վաղարշապատում հրատարակեց Գոշի Դատաստանագիրքը։ «Իրավամբ կարելի է ասել,— գրում է Խ. Թորոսյանը,— որ Վ. Բաստամյանցի հրատարակած Մխիթար Գոշի Դատաստանագիրքը միջնադարյան հայկական որևէ բնագրի առաջին գիտական համահավաք հրատարակությունն է... Վ. Բաստամյանցի բնագրագիտական աշխատանքում համարյա չկան թերություններ։ Հրատարակիչը բնագրին կցել է ընդարձակ ու արժեքավոր առաջաբան և իրավագիտական, պատմաբանասիրական ու բնագրագիտական բազմաթիվ հմտալից ծանոթագրություններ... Վ. Բաստամյանցի գործը... իր արժեքը չի կորցրել նաև այսօր» (էջ ԽԸ—ԽԹ)։

Նանոթանալով նման բարձր գնահատականի, ընթերցողը, բնականաբար, պետք է խորհի հարկ կա՞ր ի նորո հրատարակելու Դատաստանագիրքը, թե՞ պետք էր վերահրատարակել նախկինը, կամ՝ ի՞նչ է ավելացրել նոր հրատարակիչը, ի՞նչ նորություն է բերում նոր հրատարակությունը և որո՞նք են նրա արժանիքները։ Այս և բազմաթիվ այլ հարցերի պատասխանը ընթեր-

…ուր կգտնի Հրատարակությանը Խ. Թորոսյանի կցած ընդարձակ Առաջաբանում։

45 ձեռագրերի մանրակրկիտ և ջանադիր համեմատական ուսումնասիրությունը ապարդյուն չի անցել։ Ամենակարևոր խնդիրը, որ պարզված է, դա Դատաստանագրքի տարբեր խմբագրությունների փոխհարաբերության, մասնավորապես նրանց բնութագրության, ինչպես նաև մեզ հասած խմբագրություններից հեղինակայինը որոշելու հարցն է։

Դատաստանագիրքը մեզ է հասել երեք (պայմանականորեն Ա, Բ և Գ) խմբագրությամբ։ Նախորդ ուսումնասիրողները՝ Վ. Բաստամյանց, Ղ. Ալիշան, Յ. Կարստ, Վ. Հացունի և ուրիշներ առավելապես ուշադրություն են դարձրել այդ խմբագրությունների արտաքին, ձևական կողմի վրա։ Ա խմբագրությունը Նախադրությունից հետո չի բաժանված երկու մասի, այսինքն՝ աշխարհիկ և եկեղեցական օրենքներն իրարից անջատված չեն, Բ խմբագրությունը, ընդհակառակը, որոշվում է հենց այդպիսի անջատմամբ, իսկ Գ խմբագրության բնագիրը զգալիորեն համառոտ է, բայց ինչպես Ա խմբագրությունը երկու մասի բաժանված չէ։ Վ. Բաստամյանցը հեղինակային է համարել և հրատարակել է Բ խմբագրությունը։ Խ. Թորոսյանը քննարկելով երեք խմբագրությունների միջև եղած ոչ միայն ձևական, այլև էական տարբերությունները, պարզել է, որ այդ խմբագրություններն առաջացել են ոչ թե պատահականորեն, այլ անհրաժեշտաբար։ Նա ապացուցել է, որ հեղինակային է եղել Ա խմբագրության բնագիրը, որն ստեղծվել է այն ժամանակ, երբ Հայաստանը գտնվում էր սելջուկյան տիրապետության ներքո, ուստի երկրում աշխարհիկ իշխանության բացակայության պայմաններում դատական իրավասության մենաշնորհը Գոշը վերագրել է հոգևոր իշխանությանը։ Դատաստանագրքի բաժանումը երկու մասի տեղի է ունեցել Զաքարյանների իշխանության առաջացման պայմաններում, Վ. Հացունու կարծիքով, թերևս իրեն՝ Գոշի ձեռքով, իսկ Գ խմբագրության կրճատումը և փոփոխությունները կատարվել է գործնական, կիրառական նկատառումներով։ Ըստ այդմ՝ Խ. Թորոսյանը պարզել է, որ կրճատվել են առավելապես կրոնական հավելում-փաստարկները, իսկ փոփոխությունները բխել են ժամանակի և կիրառական պահանջներից։ Խ. Թորոսյանը պարզել է նաև, որ Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի հիմքում ընկած է հենց այս համառոտ խմբագրությունը. հետևաբար, այն առաջացել է նախքան 1265 թ., երբ գրվել է Սմբատի Դատաստանագիրքը։

Այսպիսով, սկզբնականը՝ հեղինակայինը Ա խմբագրությամբ բնագիրն է, որը պահպանվել է, եթե ոչ հեղինակային գրչությամբ, ապա նրանից ընդօրինակված երկրորդ կամ երրորդ սերնդի ձեռագրերով։ 13-րդ դարի (1295 թ.) ընտիր ձեռագրի հիման վրա Վ. Բաստամյանցը հրատարակել է Բ խմբագրության բնագիրը, իսկ Ա և Գ խմբագրությունները մնում էին չհրատարակված։

Մխիթար Գոշի Դատաստանագրքի երեք խմբագրությունների առկայությունը և նրանց առաջացման հանգամանքները տարակույս չեն թողնում, որ դրանցից յուրաքանչյուրը յուրովի մեծ արժեք է ներկայացնում, ուստի որևէ խմբագրության բնագրի լավագույն գիտական հրատարակությունն իսկ ոչ միայն չի բացառում մյուս խմբագրությունների բնագրերի հրատարակությունը, այլև ընդգծում է դրա անհրաժեշտությունը։ Խ. Թորոսյանը միանգամայն ճիշտ է վարվել՝ հրատարակելով ինչպես հեղինակային Ա օրինակը, նույնպես և փոքր-ինչ ավելի ուշ կրճատված Գ խմբագրության բնագրերը, որով, Վ. Բաստամյանցի հրատարակած Բ խմբագրության բնագրի հետ միասին, ամբողջանում է միջնադարյան հայ իրավագիտության խոշորագույն գրավոր հուշարձանի հրատարակությունը։

Խ. Թորոսյանը կազմելով Ա և Գ խմբագրությունների գիտական բնագրերը, չի բավականացել միայն դրանց տարընթերցումների նշումներով։ Նա կատարել է նաև մի շատ օգտակար աշխատանք՝ հատորում զետեղելով ընդարձակ ծանոթագրություններ (էջ 531—608), որոնցում համադրությամբ բերված են ոչ միայն Ա և Գ, այլև Բ խմբագրությունների միջև եղած տարբերությունները։

Հրատարակությանը կցած իր Առաջաբանում Խ. Թորոսյանը քննարկել է նաև մի շարք այլ հարցեր, որոնցից մեկն էլ վերաբերում է Դատաստանագրքի ստեղծման ժամանակին։ Չամչյանը, Ալիշանը և ուրիշներ այն կարծիքն են հայտնել, որ Մխիթար Գոշը Դատաստանագիրքը գրել է 1184 թ.։ Վ. Բաստամյանցը քննարկելով այդ հարցը՝ եզրակացրել է, որ Գոշը 1184 թ. սկսելով Դատաստանագրքի շարադրանքը, մինչև իր մահը (1213 թ.) անընդհատ հարստացրել է այն, բայց մի ամփոփ ամբողջության չի հասցրել։

Խ. Թորոսյանը գտնում է, որ Դատաստանագիրքն իր Նախադրությամբ և 251 հոդվածներով շարադրվել և ավարտվել է 1184 թ.։ Հեղինակային երկրորդ օրինակը, նույն ծավալով, Մխիթար Գոշն ուղարկել է Ամենայն Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղային՝ հավանության կամ մերժման

խնդրանքով, հայտնելով, որ «...մերքս ընթերցեալ վարդապետք՝ հաճեալ ընկալան» (էջ ԼԷ—ԼԸ, Ի2)։ Գրիգոր Տղան վախճանվել է 1193 թ., հետևաբար Դատաստանագիրքը մինչ այդ արդեն պատրաստ էր։

Դատաստանագրքի ստեղծումն, իհարկե, իր պատմական նախադրյալներն ուներ և պայմանավորված էր տվյալ դարաշրջանի հայ հասարակական-տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի մակարդակով։

Մխիթար Գոշն ընդառաջում էր դարի պահանջին։ Նա ինքը մանրամասն շարադրել է Դատաստանագրքի ստեղծման տասներկու պատճառները։ Գոշը և ժամանակակիցները լավ էին գիտակցում նաև աշխարհիկ, մասնավորապես քաղաքային կյանքի զարգացման նշանակությունը և «քաղաքի օրինաց» անհրաժեշտությունը։ Անտարակույս կարելի է ասել, որ առանց քաղաքների և քաղաքային կյանքի զարգացման որոշակի մակարդակի, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը չէր ստեղծվի։

Խ. Թորոսյանը իրավացիորեն նշում է, որ Մխիթար Գոշն ընդառաջում էր նաև գալիքին՝ սելջուկյան տիրապետության դեմ պայքարող հայ ժողովրդի քաղաքական իշխանության վերականգնմանը։ Առաջաբանի հեղինակն ընդգծում է սելջուկյան տիրապետությունից ազատագրվելու համար վրացական թագավորության և հայկական իշխանական տների ուժերի միավորման և ռազմական սերտ զինակցության խոշոր նշանակությունը, զինակցություն «որն, իրոք, մեծ հաջողություն բերեց թե՛ Հայաստանին և թե՛ Վրաստանին» (էջ Ժ)։

Այստեղ հարկ է նկատել, որ Առաջաբանի հեղինակը առավելապես ռազմական զինակցության տեսանկյունից է գիտել հայ-վրացական համագործակցությունը և չի անդրադարձել վերջինիս վարչա-քաղաքական բնույթին։

Ե. Թորոսյանը իրավացի է, որ XII դ. վերջերին, երբ Գոշը ստեղծում էր իր Դատաստանագիրքը, հայ ժողովրդի առջև ծառացած հիմնական պատմական խնդիրը սելջուկյան լծից ազատագրվելն էր, որի համար նա պետք է համախմբեր իր ուժերը, բայց անհաջող է այն ձևակերպումը, թե դա «անպայման ենթադրում էր նաև միջդասակարգային հակամարտությունների նթե ոչ վերացում, ապա դոնե կասեցում» (նույն տեղում)։ Դասակարգային հակամարտությունների վերացման մասին թեկուզ և թեականորեն խոսելն ավելորդ է, մանավանդ որ ինքը՝ հեղինակը, քանիցս ընդգծում է դասակարգային հակասությունների անհաշտելիությունը, այլև Դատաստանագրքի դասակարգային և դասային բնույթն ու առանձնահատկությունները։

Առաջաբանում Խ. Թորոսյանը առաջադրել և քննել է նաև Դատաստանագրքի գործադրության հարցը, դրան տալով դրական պատասխան։

Դատաստանագրքի ձեռագրերից մեկը նվիրվել է Հաթերքի (Վերին Խաչենի) իշխան Վախթանգին «ի կամս իւր զդիրքս դատաստանի անսխալ ուղղութեամբ վարել զպատուիրան սորինս»։ Այնուհետև, անդրադառնալով Դատաստանագրքի Գ խմբագրությանը, որի վրա նախորդ ուսումնասիրողները պատշաճ ուշադրություն չեն դարձրել, Թորոսյանը ընդգծում է, որ այս բնագրի «համառոտումն իրականացվել է, առաջին հերթին, նորմատիվ նյութը կրոնական հավելումներից թոթափելու հաշվին»։ Բացի այդ, այն համառոտված լինելով հեղինակային օրինակ հանդիսացող Ա խմբագրությունից, ազատ է վերջինիս մեջ տեղ գտած հեղինակային միջամտություններից և հայացքային երանգավորումներից։ Այդ ամենն արված է գործնական, կիրառական նպատակով, ուստի Գ խմբագրության գոյությունն իսկ ապացույց է, որ Դատաստանագիրքը գործող օրենք է եղել։ Ինորոշ է և այն, որ հենց Գ խմբագրությունն է դրվել Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի հիմքում, դրանով այն գործադրություն է ստացել միջնորդված ձևով։ Այնուհետև, Գոշի Դատաստանագիրքը ընկած է նաև լեհահայոց դատաստանագրքի հիմքում, որի գործադրության մասին տարակույս չկա։

Կիրառական նպատակներով են կատարվել լատիներեն, լեհերեն, ղեչաղերեն, վրացերեն և ռուսերեն թարգմանությունները՝ լինեին դրանց ուղղակի, թե միջնորդված։ Բազմաթիվ փաստերի վերլուծությամբ Խ. Թորոսյանը եզրակացնում է, որ Մխիթար Գոշի Դատաստանագիրքը ուղղակիորեն, փոփոխված կամ միջնորդված ձևով, գործադրվել է տարբեր վայրերում՝ դարեր շարունակ։

Դատաստանագրքի Առաջաբանում Խ. Թորոսյանը, բնականաբար, անդրադարձել է XII—XIII դդ. հասարակական-տնտեսական և քաղաքական իրադրության բնութագրությանը, ինչպես և Գոշի հայացքներին։ Նա ընդգծում է Դատաստանագրքի բացառիկ նշանակությունը միջնադարյան Հայաստանի հասարակական հարաբերությունների և առհասարակ ներքին կյանքի բազմազան կողմերի դիտական ուսումնասիրության համար։ Մխիթար Գոշի Դատաստանագրքի բազմաթիվ արժանիքների շարքում Խ. Թորոսյանը իրավացի նշում է նրա մարդասիրական

եկակետը, որի արտահայտություններից մեկը օրենքի առջև անձի և մարդու փոխհարաբերության հարցն է։ Միջնադարյան դասակարգային, դասային հասարակության մեջ օրենքը ճանաչում էր ոչ թե մարդուն, այլ անձին՝ իր որոշակի սոցիալական պատկանելիությամբ և դիրքով։ Մարդու և անձի հակադրության վերացումը օրենքի առջև խոշոր առաջընթաց քայլ էր, և Խ. Թորոսյանը ցույց է տվել, որ Գոշը առաջին օրենսդետներից մեկն էր, որ արեց այդ քայլը։ այլ հարց է թե արդյոք կարո՞ղ էր այն կիրառվել միջին դարերում։ Մխիթար Գոշի հայացքներին և նրա դարաշրջանի հասարակական հարաբերություններին, ինչպես և դրանք արտահայտող իրավական նորմերին անդրադառնալիս Խ. Թորոսյանը առաջ է քաշել շատ ուշագրավ հարցեր, արել է բազմաթիվ օգտակար դիտողություններ և եզրակացություններ, բայց տարվելով դրանցով թույլ է տվել նաև որոշ վրիպումներ։ Հարկ կա՞ր, օրինակ, ասել թե «կենտրոնացված ուժեղ թագավորական իշխանության Մխիթարի տեսությունը իր մեջ պարունակում էր արդեն ներքին զարգացման այն հակումը, որը պետք է տաներ դեպի բացարձակ միապետության գաղափարը (էջ ԺԸ, ընդգծումը մերն է—Բ. Ա.)։ Ապա Թորոսյանը շտապում է ավելացնել՝ «...գիտենք նաև, որ այդ բանը Հայաստանում տեղի չունեցավ և չէր էլ կարող տեղի ունենալ այն ժամանակ» (նույն տեղում)։

Մխիթար Գոշը վշտացել է ժողովուրդների անմիաբանության և հակադրությունների առկայության պատճառով։ Գեղեցիկ է ասել նա. «Արդ այլ ինչ հնար բառնալոյ զայդ հակառակութիւնդ ոչ տեսանեմք, բայց թէ միմեանց հաւանելն և կալ յիւրաքանչիւր կարգի ամենայն ազգս» (էջ ԻԲ)։

Ճիշտ է, Մխիթար Գոշը ձգտել է ժողովուրդների խաղաղ գոյակցության, բայց Խ. Թորոսյանը պարտավոր էր ցույց տալ, որ այդ սկզբունքը մեր օրերում այլ իմաստ և բովանդակություն է ստացել։

Մեր այս մասնակի դիտողությունները վերաբերում են Դատաստանագրքին կցված Առաջարանին, որի հեղինակը բազմաթիվ հարցեր է քննարկել գիտական բարձր մակարդակով և դրանց տվել է դրական լուծում։

Դրանով հանդերձ, մեր գնահատականի բուն առարկան ոչ միայն այդ Առաջաբանն է, այլև Դատաստանագրքի նոր հրատարակված Ա և Գ խմբագրությունների բնագրերը, որոնք հեղինակից պահանջել են տասը տարվա տքնաջան ու մանրակրկիտ աշխատանք։ Պատասխանատվության մեծ զգացումով կազմված և հրատարակված են միջնադարյան հայ մատենագրության բացառիկ արժեքավոր մի գործի երկու խմբագրությունների համեմատական բնագրերը՝ ընտիր ձեռագրերի հիման վրա։ Բավական է ասել, որ Ա հեղինակային խմբագրության հիմքում դրված են Հաթերքի (Վերին Խաչենի) Վախթանգ իշխանին նվիրված գրչագիրը, որը պահվում է Վենետիկի միաբանության մատենադարանում և ըստ Վ. Հացունու՝ սա Դատաստանագրքի չորրորդ օրինակն է կամ նրանից արտագրված մի գրչագիր, ինչպես նաև Գրիգոր Տղային՝ նրա հավանությունը ստանալու համար Գոշի ուղարկած գրչագրից 1240 թ. արտագրված մի օրինակ (Զմմառի վանքի ձեռագիրը)՝ համեմատված այլ ձեռագրերի, դրանց թվում և Վենետիկում պահվող 1238 թ. հնագույն ձեռագրի հետ։

Գ խմբագրության հիմքում դրված են XIV դ. 3 գրչագրեր և դրանցից ծագող, թեև ավելի ուշ արտագրված, մի ձեռագիր։ Այդ երկու խմբագրությունների գիտական բնագրերը կազմված են մեծ բարեխղճությամբ, բերված են փոքրիշատե կարևորություն ներկայացնող բոլոր տարբերությունները։

Խ. Թորոսյանի հետ առանձին դեպքերում կարելի է վիճել, թե ինչո՞ւ այս կամ այն կարևոր թվացող տարբերությունը չի զետեղել բնագրում, բայց վիճարկման ենթակա չէ առավել հին և ընտիր ձեռագրերին նախապատվություն տալու նրա ընտրած սկզբունքը։

Հայագետ մասնագետներին հնարավորություն է ընձեռված իրենց հետաքրքրող ստուգումները կատարելու առատորեն նշված տարբերությունների օգնությամբ։ Բացի այդ, վերևում արդեն ասվեց, որ Վ. Բաստամյանցի հրատարակած Բ խմբագրության բնագրերի կարևոր տարբերությունները Ա և Գ խմբագրությունների բնագրերից Խ. Թորոսյանը մեջ է բերել իր հրատարակության ծանոթագրություններում։

Այսպիսով, Մխիթար Գոշի Դատաստանագրքի Ա և Գ խմբագրությունների լույսընծայմամբ կատարելապես ավարտվել է այդ հոչակավոր իրավագիտական հուշարձանի գիտական հրատարակությունը և հայագիտությունը անփոխարինելի այդ սկզբնաղբյուրն ունի ամբողջական ձևով։

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս